

# ԴԱՌՆ ԽՈՐՀՐԴԱՅՈՒԹԻՒՆԵՐ Ռ.Ա.Կ. ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ «ՄԵՐ ԽՕՍՔ»-ԻՆ ԱՌԻԹՈՎ

Հայկ Նազարեան - Մոնթրէալ, Մարտ 2005

Ուամկավար Ազատական Կուսակցութեան Կեդրոնական Վարչութիւնը վերջերս իր մամուլին մէջ հրատարակեց հաղորդագրութիւն մը, որ կը վերաբերէ Հ.Բ.Ը.Միութեան Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը փակելու ծրագրին դէմ բողոքարկու Դոլսոյ Պատրիարք Մեսրոպ Արքեպոս. Մութաֆեանին՝ «Մերուպ Արք. Մութաֆեան Բանապրկութեան մէջ» խորագրով: Ռ.Ա.Կ. դեկավարութեան սոյն հաղորդագրութեամբ բացայայտած դիրքը սխալ կը գտնեմ հետեւեալ պատճառներով:

1) Հարցին էութիւնը անտեսելով, շատ անվայել կերպով Մութաֆեան Պատրիարքին անձը խծրանքի եւ անարգանքի ենթարկուած էր, փոխանակ Մելգոնեանը փակելու դէմ անոր ստանծնած դատական նախաձեռնութիւնը քննարկելու:

2) Ինձի համար խորոնկ վիշտ է տեսնել որ Ռ.Ա.Կ.ը ազգապահպանման իր հիմնական առաքելութենէն շեղելով՝ ոչ մէկ քննադատական խօսք ունի Հ.Բ.Ը.Մ.ի այժմու դեկավարութեան Մելգոնեանը փակելու հակազգային որոշման դէմ, բայց բուռն կերպով քննադատելով կը խծրել եւ կ'անարգէ Մերուպ Պատրիարքը, որ Մելգոնեան կտակը իրագործող եւ զայն ապա Հ.Բ.Ը.Միութեան փոխանցող պատրիարքութեան այժմու դեկավարը ըլլալու հանգամանքովը օրինական ու բարոյական իրաւոնք ունի Մելգոնեանի ձակատագրով զբաղելու:

Ինձի առաւելագոյն անհանգստութիւն եւ մտահոգութիւն պատճառողը կուսակցութեան այժմու սխալ դիրքորոշումն է այս շատ տիսուր կացութեան հանդէպ: Եթի աշխարհի վրայ ցիրուցան հազարաւոր Մելգոնեանցիներ եւ անոնց համակիր զանգուածները, կազմակերպութիւններ, հաստատութիւններ ու մամուկ, գրաւոր եւ բերանացի բողոք կը բարձրացնեն Մելգոնեանի փակումին դէմ եւ դատական միջոցառութեանը ալ կը ձեռնարկուին, Ռ.Ա.Կ. դեկավարութիւնը տակաւին ի՞նչ խիդով ու տրամաբանութեամբ դէմ կը կենայ ընդգուտի ալիքին, եւ ինչ որ բոլորովին աններելի է, արգելք կը դնէ մամուլին վրայ այդ մասին նպաստաւոր արտայայտութիւններ հրատարակելու:

Արդ երբե՞ն ի վեր բռնատիրական գործելակերպը Ռ.Ա.Կ.ին համար ընդունելի դարձաւ: Ինչո՞վ կարելի է բացատրել այս քննադատական քայլը, որ միայն ընդգուտ, դառնութիւն եւ ըմբոստութիւն կրնայ յառաջ բերել, բայց երբեք չի կրնար ազատ մտածում սահմանական դաշտում:

Շատ տիսուր է անդրադառնալ որ Ռ.Ա.Կ.ը յանձին իր այժմու դեկավարութեան, ստանձնած է անպատուաբեր «առաքելութիւն» մը՝ պաշտպանելու համար Հ.Բ.Ը.Մ.ի այժմու դեկավարութիւնը, որ իր զլսաւորած միութեան դպրոցաշէն վաստակը ունակրիսելով դպրոց փակել կը ծրագրէ, այդ ալ Սփիտոքի լաւագոյն եւ ամենէն վաստակաւոր «լոյսի տաճար»ը՝ Մելգոնեան կրթական Հաստատութիւնը: Կար ժամանակ, եթի Ռ.Ա.Կ.ը անուղղակիորէն կը վերահսկէր Հ.Բ.Ը.Մ.ի ազգօգուտ գործունելութեան վրայ՝ իր գործիչներով, մտաւրականներով ու մամուլով ծառայելով անոր: Մինչ այսօր դերերը շրջուած են կարծես, կը թոփ թէ կարգ մը Ռ.Ա.Կ. դեկավարներ աղայական աֆարիսներէ շոյուելով եւ «երեսուն արծաթ»ով ծախսած են իրենց անկախութիւնը:

Ցետպատերազմեան շրջանի վերակազմակերպուած եւ լայն ժողովրդականութիւն գտած Ռ.Ա.Կ.ը քանի մը տասնամեակ փառքի օրեր ապրելէ յետոյ, անկումի շրջանի մը մէջ մտած է դժբախտարար: Այս ձշմարտութեան ապացոյցը կը տեսնենք գրեթէ բոլոր կարեւոր հայկական համայնքներուն մէջ: Արդարեւ, դառն իրականութիւն մըն է որ գործող պաշտօնական Ռ.Ա.Կ.ին զուգահեռ կազմուած են նաեւ հակառակ խմբակցութիւններ, որոնք երեսն աւելի բազմամարդ ու որակաւոր են: Եւ այս տիսուր կացութեան պատճառը դեկավարութեան նման սխալներու մէջ պէտք է փնտուի:

1948-էն ի վեր կուսակցական եղած ըլլալով, կեանքի փորձառութեամբ եւ զանազան մակարդակներու վրայ պատախանատու պաշտօններ վարած ըլլալովս՝ բարոյական պարտք կը զգամ քննադատել Ռ.Ա.Կ.ի այժմու դեկավարութեան այս մեծ սխալը, որ կու գայ աւելնալու գործուած շարք մը ուրիշ սխալներու վրայ, որոնց հետեւանքով ան ենթակայ է ներքին եւ արտաքին քննադատութեանց:

Այլախոհ մտաւրական ընկերներու դէմ անուղղակի պատժամիջոցները՝ անտեսում, զրպարտութիւն, մամուլով արտայայտուելու արգելք եւայլն, անոնց վնասելէ աւելի կուսակցութեան կը վնասեն, տակաւին նկատի շունենալով այդ արարքին բարոյական յանցագործութիւնը: Ո՞ւր են Ռ.Ա.Կ. մամուլի փայլուն աստղերէն Գրիգոր Քէօսէանը, Վաչէ Ղազարեանը եւ ուրիշներ: Կեկավարութիւնը ի՞նչու հեռացուցած է զանոնք, կամ այն աստիճան զգուեցուցած՝ որ իրենք հեռանան կուսակցութեանէն: Եւ տակաւին որքան ցաւալի է իմանալ որ Հայկաշէն Ուզունեանի պէս վաստակաւոր մը, որ յետպատերազմեան շրջանին Ռ.Ա.Կ.ը վերականգնող հնգեակէն միակ վերապրողն է, եւ տասնամեակներ շարունակ բարձրագոյն դիրքերէ ծառայած է Ռ.Ա.Կ.ին եւ Հ.Բ.Ը.Մ.ին, այսօր, իր տեսակէտները արտայայտելու մամուլ կը փնտու, քանի որ, իր հարազատ Ռ.Ա.Կ. մամուլը փակ է իր առջեւ .... Ողբերգական երեւոյթ՝ որուն պատախանատու Ռ.Ա.Կ. դեկավարութիւնը պէտք է սթափի եւ ինքնասրբագրութիւն կատարէ՝ փրկելու համար այն, ինչ որ տակաւին կարելի է փրկել: Եւ այդ ուղղութեամբ առաջին մտածումը պէտք է ըլլայ անդրադառնալ ու գիտակցի իր կոչումին՝ օժանդակելու համար ազգային կեանքի բարութ ընթացքին, ազգապահպանումին, Սփիտքի կրթա-մշակութային ցանցի պահպանման ու հզօրացման, հայենիքի բարզաւածման, բաներ՝ որոնք իր գոյութեան իմաստն իսկ են:

Բայց մանաւանդ արգելք հանդիսանալով ազգավանա արարքներու, յատկապէս երբ իր իսկ ծոցէն կը ծնին անոնք: